ՀՏԴ 343.3
Քրեական իրավունք

Գեղամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Զորամասի հրամանատարի օգնական սոցիալ-իրավական աշխատանքների գծով, իրավաբան

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՆՈՂ ՈՉ ԿԱՆՈՆԱԴՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Բանակում, որպես հասարակության մի մաս, գործում են հանցավորության ընդհանուր պատճառներն ու պայմանները, սակայն ստանում են յուրահատուկ ձևափոխումներ, որոնք հատուկ են զինվորական ծառայությանը, միջավայրին, նրանց կենցաղի պայմաններին: Բանակի քրեածին իրավիճակի վրա ներգործում են այնպիսի բացասական գործոններ, որոնք բնորոշ են նաև ամբողջ հասարակությանը, օրինակ՝ բարոյականության և կարգապահության մակարդակը, իրավական գիտելիքների պակասը և այլն:

Բանալի բառեր՝ *Բանակ, զինվորական ծառայություն, հանցագործություն, ոչ կանոնադրային հարաբերություններ, քրեական մշակույթ, կարգապահական գումարտակ, պատիժ, կալանք, դպրոց, ռազմական գիտություն*

Г.Арутюнян

ПРЕСТУПЛЕНИЯ ПРОТИВ ПРАВИЛ ВЕДЕНИЯ ВОЕННОЙ СЛУЖБЫ, ВЕДУЩИЕ К НЕУСТАВНЫМ ВЗАИМООТНОШЕНИЯМ И СПОСОБЫ ИХ ПРЕДОТВРАЩЕНИЯ

В армии, как части общества, функционируют общие причины и условия преступности, но они получают уникальные модификации, характерные для военной службы, окружающей среды и условий их жизни. На криминальной ситуации в армии влияют такие негативные факторы, которые характерны для всего общества, такие как уровень морали и дисциплины, отсутствие правовых знаний и так далее.

Ключевые слова: *Армия, военная служба, преступность, неуставные отношения, криминальная культура, дисциплинарный батальон, наказание, задержание, школа, военная наука*

G. Harutyunyan

CRIMES AGAINST THE RULES OF MAINTAINING A MILITARY SERVICE LEADING TO UNCERTAIN RELATIONSHIPS AND METHODS OF ITS PREVENTION

In the army, as part of society, there are common causes and conditions of crime, but they receive unique modifications characteristic of military service, the environment and their living conditions. The criminal situation in the army is influenced by such negative factors that are characteristic of the whole society, such as the level of morality and discipline, lack of legal knowledge, and so on.

Key words: *Army, military service, crime, non-statutory relations, criminal culture, disciplinary battalion, punishment, detention, school, military science*

Բանակը ոչ միայն ռազմական ուժի խորհրդանիշ է, այլ նաև քաղաքական կայունության: Զինված ուժերը պետության անօտարելի մասն են: Հաճախ բանակն ու պետությունը ընկալվում են որպես միմյանց հետ սերտաճած եզրույթ: Հազիվ թե օրինակ բարձր մարտունակությամբ և զինտեխնիկայով զերհագեցած բանակ ունեցող պետությանը հնարավոր լինի ընկալել որպես թույլ և միջազգային քաղաքականության մեջ իր խոսքը չունեցող պետություն: Այսօր ուժեղ պետություն-հզոր բանակ հասկացություններն ուղիղ համեմատական են: Բանակն իր մեծ ռեսուրսներով և հասարակության կողմից ընկալվող դրական կերպարով ստեղծում է նմանատիպ կերպար նաև իշխող էլիտայի և պետության համար: Բանակի հանդեպ ունեցած վստահության չափաբաժնով ընկալելի է դառնում հասարակության տրամադրվածությունը իր պետության հանդեպ, հայրենասիրությունը և հայրենիքը պաշտպանելու պատրաստակամությունը: Բանակի կերպարի վերաբերյալ հասարակության ընկալումները տարբեր են, ինչպես և տարբեր են նրան վերագրվող գործառույթները: Որոշ մշակույթներում բանակն մասնակցում է հասարակական կյանքի բոլոր գործընթացներին, անգամ իշխանության ձևավորմանը: Բանակի կերպարի ձևավորման կարևոր նախադրյալ են համարվում կանոնադրային հարաբերությունների պահպանումը:

Կայուն քաղաքական զարգացումների և խաղաղության պահպանման համար կարևոր է պետություն-բանակ անքակտելի կապը և փոխգործունեությունը, որի հիմքով էլ պետությունը համապատասխան լծակներ պետք է ի գործ դնի կարգավորելու բանակում ոչ կանոնադրային հարաբերությունների դրսևորումները: Միայն պետությունն է լիազորված ձևավորելու զինված ուժեր, ուստի պետության խնդիրն է զինված ուժերի վերաբերյալ հասարակության կողմից շահավետ ընկալումների ձևավորումը, նրա հանդեպ վստահության ստեղծումը և բանակի շնորհիվ ուժեղ ու պաշտպանված լինելու մթնոլորտի ապահովումը: Պետության կերպարի համար էական է, որպեսզի բանակը չդառնա իշխանություն

ձևավորող մարմին, այլ լինելով պետական ապարատի մի մաս՝ մնա պետության կողքին առանց քաղաքական գործընթացների մասնակից դառնալու: Պետությունն ու բանակը երկու փոխկապակցված երևույթներ են, որոնցից մեկն առանց մյուսի գոյություն ունենալ չի կարող: Ժամանակակից քաղաքական և քաղաքացիական զարգացումներին համընթաց յուրաքանչյուր պետության անվտանգության և կայունության համար կարևորագույն դեր են խաղում Զինված ուժերը: Բանակը ազգային անվտանգության երաշխավորն է, պետականության հենասյունը: «Թույլ» բանակ որակումը արդեն իսկ փոխում է հասարակական տրամադրվածությունը և բանակի, և պետության հանդեպ, ցածրացնում ինքնահիմիջը և ստեղծում անպաշտպանվածության մթնոլորտ:

Հանրային ընկալումներում զինված ուժերի հանդեպ վերաբերունքի ձևավորման մեջ մեծ դեր ունեն զինծառայողները, նրանց հարաբերությունները քաղաքացիական սոցիումի հետ, վարքագիծը, կեցվածքը: Այսինքն, էական է, թե որքանով է զինծառայողը իրեն նույնացնում բանակի հետ և բանակի կերպարի մի մասը լինելով՝ նպաստում հանրության մեջ այդ կերպարի բարելավմանը: Բանակը պետության ներքին կերպարի բաղադրիչը լինելուց բացի, նաև նրա արտաքին կերպարի ձևավորման ամենազդեցիկ գործոնն է: Համաշխարհային հարթակում այսօր ամենահզոր բանակների եռյակում են ԱՄՆ, Ռուսաստանն ու Չինաստանը, ինչն այս տերություններին դիրքավորում է միջազգային հարաբերություններում, նրանց հատկանշում որպես «գերտերություններ»:

Այսօր համաշխարհային ռազմականացման միտում կա, ինչն այս կամ այն չափով ազդում է բոլոր պետությունների վրա: Հատկապես հակամարտությունների կիզակետ հանդիսացող տարածշրջաններում բանակի առկայությունն է հանդիսանում հնարավոր պատերազմները կանխող հանգամանքը: Ուստի բանակի ներքին և արտաքին կերպարը բնորոշում և որակում է այդ բանակը ձևավորող և ֆինանսավորող պետությանը, նրա տնտեսական կարգավիճակը, պետությանը սատարելու և պաշտպանելու հասարակության արժեհամակարգը, ինչպես նաև այդ պետության ապագայի տեսլականը:

Սույն հոդվածում կփորձենք մեկնաբանել ոչ կանոնադրային հարաբերությունները զինվորական ծառայության ինստիտուտի համատեքստում, ուսումնասիրել ոչ կանոնադրային հարաբերությունները որպես զինվորական հանցագործությունների դրդիչ գործոն և ծնող պայման, կատարել ՀՀ Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների և դրանց հետևանքների վերլուծություն՝ այդպիսով առաջադրելով ոչ կանոնադրային հարաբերությունների բացառման ուղիները:

Ոչ կանոնադրային հարաբերությունները՝ զինվորական ծառայության ինստիտուտի համատեքստում:

Զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք, հատկապես ժամկետային զինծառայողները, այնպես, ինչպես դատապարտյալները, տևական ժամանակամիջոցում գտնվում են հասարակական առօրյա կյանքից և ընտանիքից հեռու, միասեռ անձնակազմում, հասարակական միջավայրից որոշակի մեկուսացման պայմաններում՝ քրեական ենթամշակույթը զինվորական միջավայրում ներազդում է ոչ կանոնադրային հարաբերությունների վրա, որը որոշ մասնագետների կարծիքով, այդ թվում Ս.Ֆեդորովի[1], Ի.Վ.Գովորովի[2], կանոնակարգային համատեքստում հիշեցնում է ուղղիչ հաստատություններում առկա պայմաններով գործող համակարգ:

Վերջին հարյուրամյակների ընթացքում «հանցավոր տարրը» միանշանակ կերպով «հարմարվել է» մեր գոյության պայմաններին: Անձանց մոտ, ովքեր չեն կարողանում գործառնել տվյալ միջավայրին ներհատուկ կանոնադրային պայմաններում, առաջանում է առավել հարմար միջավայրում գործունեություն ծավալելու պահանջմունք, ինչի արդյունքում առաջանում են ոչ կանոնադրային հարաբերություններ, որը հատուկ է հանցագործներին: Այստեղ կարիք ենք գտնում ընդգծել մեր համաձայնությունը Վ.Մ.Անիսիմկովի տեսակետի հետ առ այն, որ նմանօրինակ անձանց կողմից արտաքին միջավայրն ընկալվում է թշնամաբար, կամ, լավագույն դեպքում, օտար[3]:

Բանակը հասարակության մի մասնիկն է, որտեղ քրեական ենթամշակույթի գաղափարները ծագել են ոչ կանոնադրային հարաբերությունների առկայության և ժամանակամիջոցում դրանց տարածման հետևանքով:

Ուսումնասիրությունների արդյունքում մեր կողմից նկատված առավել բացասական կողմն այն էր, որ երբ դեռ նոր էր սկսվել ուսումնասիրվել ոչ կանոնադրային դրսևորումը բանակային միջավայրում, պատժամիջոցները գրեթե միակերպ կրկնում էին հասարակական այլ միջավայրերում դրսևորվող հանցավոր արարքների համար սահմանվող պատժամիջոցները: Բանակային միջավայրում դրսևորվող ոչ կանոնադրային հարաբերությունների դեպքում զինվորական անձն իր պատիժը կրում էր քաղաքացիական անձանց հետ: Հետևաբար, քաղաքացիական անձանց բացասական դրսևորումներն աստիճանական ազդեցություն էին ունենում հետագայում զինվորական ծառայության

---

[1] ***Федоров С.*** *Направление в дисциплинарную воинскую часть и лишение свободы // Законность. 2005. № 2. С. 9-12.*

[2] ***Говоров И.В.*** *Уголовно-правовые принципы государственной политики в области борьбы с преступностью в Советской России (1920—1940-е гг.) // История государства и права. 2004. № I. С. 31-39.*

[3] ***Анисимков В.М.*** *Россия в зеркале уголовных традиций тюрьмы. СПб., 2003. С. 13.*

վերադառնալու ենթակա անձանց վրա, ովքեր վերադառնալով զինվորական ծառայության անկախ իրենց կամքից ծառայակիցների շրջանում տարածում էին քրեական ենթամշակույթի տարրեր:

Ոչ կանոնադրային փոխհարաբերությունները ռազմասոցիոլոգիական հետազոտությունների համակարգում սահմանվում են որպես «ցանկացած հարաբերություններ, որոնք անպատիժ մնալու հետևանքով սրվում են ընդհուպ հանցավոր վարքի դրսևորումները, ներառյալ զինծառայողների ցանկացած խմբի կամ առանձին ներկայացուցիչների կողմից սպառնալիքը զինակիցների անձի և իրավունքների հանդեպ»[1]:

Ընդ որում՝ ոչ կանոնադրային փոխհարաբերությունների սոցիալ-հոգեբանական բովանդակությունը ներառում է «ինքնահաստատման, վարքի, հարաբերությունների անհատական կամ խմբային շեղվող ձևեր, ինչպես նաև բացասական սովորություններ, խմբային կեղծ ավանդույթներ, զինծառայողների մոտ նյարդային խախտումներ և բռնկվող հոգեվիճակներ, որոնց հետևանքով վնասվում է զինակիցների անձնական արժանապատվությունը»[2]:

Ինչպես նշում են ռազմական սոցիոլոգները, «բանակում շեղվող վարքի, մասնավորապես՝ ոչ կանոնադրային հարաբերությունների գործառնման հիմնական մեխանիզմը հետևյալն է. ելնելով համապատասխան առանձնահատկություններից՝ բանակում ձևավորվում են միմյանց հետ հակադրության մեջ մտնող սոցիալական խմբեր, որոնք ձգտում են սեփական խմբի դիրքի բարձրացմանը և իշխող դերի ամրապնդմանը: Զինվորական կոլեկտիվում այս կամ այն խմբի գերիշխող դիրքի ձևավորումն իր հերթին ենթադրում է այլ խմբերի նկատմամբ արտոնությունների և պարտականությունների ապահովում: Համապատասխան արտոնություններ ձեռք բերելու շնորհիվ մի սոցիալական խմբի կողմից իրեն վեր դասելը մյուսներից ենթադրում է այդ նպատակին հասնելուն ուղղված տարբեր տիպի բռնությունների իրականացում»[3]:

Ոչ կանոնադրային հարաբերությունների ամբողջությունն ու ՀՀ զինված ուժերի կողմից դրանց դրսևորումների բազմաձևությունը ժառանգվել են խորհրդային բանակից, ինչպես նաև արդի հայաստանյան հասարակության սոցիալ-հոգեբանական հարաբերություններից և բարոյահոգեբանական վիճակից: Ներքին կոնֆլիկտայնության բարձր մակարդակը, անձանց և հատկապես երիտասարդների մոտ ինքնիրացման և ինքնաարտահայտման ցանկության գերակայությունն ու հասարակության մեջ համապատասխան մեխանիզմների

---

[1] ***Образцов И. В.*** *Формы проявления неуставных отношений. Социологические исследования, 1996, № 2, С. 63-72.*

[2] *Նույն տեղում*

[3] *Ռազմական սոցիոլոգիա. Ուսումնական նյութերի ժողովածու (Լ. Հարությունյանի խմբագրությամբ): Ե., Երևանի պետական համալսարանի հրատ., 2005, էջ 219:*

թերզարգացվածությունը, օբյեկտիվ հնարավորությունների պակասն ու Խորհրդային Միության փլուզումից ի վեր ամբողջ հետխորհրդային տարածքում շարունակվող արժեքային ճգնաժամը տեղափոխվում են բանակ և դառնում զինծառայողների բացասական փոխհարաբերությունների ուղենիշը:

Ընդ որում, խորհրդային բանակից ժառանգվել են ոչ միայն բացասական ոչ կանոնադրային հարաբերությունների ձևերը, այլ նաև դրանց ռուսերեն անվանումներ, որոնք, ցավոք, «հաստատուն» տեղ են գտել հետխորհրդային ազգային բանակների զինվորական կոլեկտիվների բառապաշարում: Ինչպես նշում են հեղինակները, «ՀՀ կանոնավոր բանակը ժառանգել է խորհրդային բանակի կանոնադրային մոդելը՝ վերջինիս բնորոշ շեղվող վարքի այնպիսի բացասական դրսևորումներն արդարացնող և ինչ-որ չափով նաև լեգիտիմացնող արժեքներով, որոնք ապահովում են բանակում հանցագործությունների, «դեդովշչինայի», «ստարիկ-մոլոդոյ» և այլ ոչ կանոնադրային փոխհարաբերությունների պահպանումը և շարունակականությունը բանակում: Սրանց գումարվեցին նոր ոչ կանոնադրային հարաբերությունների ձևեր, տարածում ստացան «չաստ նայողներ» և այլ վարքի «մոդելներ»[1]:

ՀՀ զինված ուժերում, հաշվի առնելով հայ հասարակության մոնոէթնիկ բնույթն ու հիմնականում ազգային միատարրությունը, ոչ կանոնադրային հարաբերություններում միջէթնիկ բախումների փոխարեն այդ հարաբերությունները դրսևորվում են համերկրացիության հիմքով, որի հետևանքով նույն կամ հարևան բնակավայրերից զինծառայողներ փորձում են միավորվել ոչ ֆորմալ խմբերում՝ իշխանություն հաստատելու այլ զինծառայողների նկատմամբ: Զինծառայության արդյունավետության տեսանկյունից՝ նման տարբերակումներն անհիմն են և, դրանց հիմքով ստեղծվող կոնֆլիկտային հարաբերությունները տարրալուծում են զինվորական կոլեկտիվը, արհեստականորեն սրում մթնոլորտը զորամասերում:

Չնայած այն հանգամանքին, որ «դեդովշչինայի» երևույթը ՀՀ զինված ուժերում ժամանակի ընթացքում բավականին նվազել է, այդուհանդերձ ծառայության ավելի երկարատև ժամանակահատվածն անցած զինծառայողները փորձում են դրա հիման վրա իշխանություն հաստատել և «առաջնորդել» նորեկներին, հիմնականում ուժի և հարկադրանքի միջոցով՝ խախտելով կանոնադրային նորմերը: Փորձելով բացատրել «դեդովշչինայի» պատճառները՝ ելնելով բանակի սոցիալական ինստիտուտի կառուցվածքի և կառավարման ներքին մեխանիզմների առանձնահատկություններից՝ ռազմական սոցիոլոգները նշում են. «Դեդովշչինայի» առաջացումն ու գոյությունն ունի իր օբյեկտիվ և

---

[1] *Ռազմական սոցիոլոգիա. Ուսումնական նյութերի ժողովածու (Լ. Հարությունյանի խմբագրությամբ): Ե.: Երևանի պետական համալսարանի հրատ., 2005, էջ 218:*

սուբյեկտիվ պատճառները: Յուրաքանչյուր զինվորական ստորաբաժանում՝ որպես համակարգ, բաժանվում է տիպային ենթահամակարգերի: Օրինակ՝ գունդը բաժանվում է գումարտակների, գումարտակը՝ վաշտերի, վաշտը՝ դասակների, վերջինս էլ՝ ջոկատների: Սրանցից յուրաքանչյուրը ֆորմալ խմբավորում է: Ղեկավարի իրավասությունները ներառում են համակարգի ամբողջությունն ապահովելը, ենթահամակարգում կանոնադրային պահանջների իրականացումը, բարձր ղեկավար օղակների կողմից տրվող հրամանների կատարումը և այլն: Ղեկավար օղակը ներկայացնող անձի համար կանոնադրային միջանձնային հարաբերություններն ունեն երկու բաղկացուցիչ. իրենից բարձր ղեկավար օղակը, որին նա անվերապահորեն ենթարկվում է, և իրենից ցածր օղակները, որոնք անվերապահորեն ենթարկվում են իրեն:

Կանոնադրային հարաբերությունների այս կարգը պահպանվում է զինվորական պաշտոնակարգի բոլոր աստիճաններում, բացի ստորինից: Շարքային անձնակազմը, փաստորեն, պարտավոր է կատարել իրենից բարձր ղեկավարման օղակների հրամանները, սակայն չունի ստորադասներ: Կառավարման կանոնադրային համակարգի վերոնշյալ թերություններից բացի՝ «դեդովշչինա» երևույթի առկայությունը բանակում բացատրվում է նաև կրտսեր հրամկազմի թույլ, չպատրաստված լինելով[1]:

Ոչ կանոնադրային հարաբերությունների պայմաններում զինվորական կոլեկտիվի կառավարման միջոցը ոչ թե հրամկազմի հեղինակությունը և արհեստավարժությունը, առաջադրված խնդիրների լուծման ընթացքում անձի ֆիզիկական և հոգեբանական կարողությունների զարգացման հնարավորությունը և անհատական ներուժի դրսևորումը և կամ էլ՝ կանոնադրային նորմերի լեգիտիմությունն են, այլ բռնությունը: Իբրև առաջնորդության իրականացման ոչ կանոնադրային միջոց՝ բռնությունը զինակիցների հանդեպ լինում է ֆիզիկական և հոգեբանական, որոնք կարող են միմյանց հետ զուգակցվել:

Ընդ որում, եթե ֆիզիկական բռնությունը հրամկազմի ներկայացուցիչների կողմից ենթակաների հանդեպ կարող է ծառայեցվել կարգուկանոնի հաստատմանը, հանդիսանալ դաստիարակչական մեթոդների մասը կամ օգտագործվել որպես այլընտրանքային պատժամիջոց առավել անուղղելի զինծառայողների հանդեպ, ապա այն իրականացվում է տվյալ սպայի անձնական պատասխանատվությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշ սպաների փորձի համաձայն՝ ֆիզիկական բռնությունը ենթակաների հանդեպ դաստիարակչական նպատակներով ունեցել է իր արդյունավետությունը, սակայն նաև եղել են դեպքեր, երբ անտեղի բռնության գործադրմանը

---

[1] ***Образцов И. В.*** *Формы проявления неуставных отношений. Социологические исследования, 1996, № 2, С. 66:*

ենթական անմիջապես պատասխանել է համանման գործողությամբ, որի արդյունքում սպան նվաստացվել է, դրանով իսկ գցել առհասարակ սպայի պատիվը, կորցրել իր հեղինակությունը[1]: Այլ բան է բռնությունը ոչ կանոնադրային հարաբերություններում, որն ուղղված է ոչ թե կանոնադրային նորմերին զինծառայողների, այլ զինծառայողների մի խմբի կամքին ենթարկելը, երբ այդ խումբը փորձում է իշխանություն հաստատել մյուսների նկատմամբ: Ոչ կանոնադրային հարաբերությունների բոլոր տարատեսակներում ֆիզիկական և հոգեբանական բռնությունն իրականացվում է զինակիցների կամքին հակառակ՝ խախտելով կանոնադրային նորմերը և բարոյական սկզբունքները, ուստի չի կարող համարվել առաջնորդության դրսևորման մեխանիզմ:

Ոչ կանոնադրային հարաբերություններում բռնության կիրառումը ուղղված չէ զինակիցների մեջ ցանկության առաջացմանը՝ ծառայելու համընդհանուր գործին: Ընդհակառակը՝ այն ստեղծում է ոչ միայն հարկադրանքի մթնոլորտ և սքողված ատելություն զինակիցների և ղեկավար անձնակազմի հանդեպ, այլև ատելություն առհասարակ զինծառայության նկատմամբ, որը ոչ կանոնադրային հարաբերությունների հետևանքով ոմանք սկսում են ընկալել որպես զվարճանք և սեփական անձնային հիմնախնդիրների բարդում մյուսների վրա, իսկ ոմանք էլ՝ որպես կյանքի նվաստացուցիչ մի փորձ, որը որևէ կերպ չի առնչվում մարտական կարողությունների ձեռքբերման և ինքնազարգացման հնարավորություններին:

Ցանկացած բանակ չի կարող խուսափել իր ներսում ոչ կանոնադրային հարաբերությունների դրսևորումներից, որոնք, ինչպես արդեն նշվել է, պայմանավորված են յուրաքանչյուր սոցիալական ինստիտուտում կառավարման ֆորմալ և ոչ ֆորմալ մեխանիզմների համադրության, համաչափության առանձնահատկություններով: Բանակում այդ համադրումը պետք է կատարվի հօգուտ ֆորմալ հարաբերությունների էական ծավալի, որտեղ կանոնադրային հարաբերությունները և դրանք կարգավորող ֆորմալ նորմերն ու կանոնները պետք է լինեն հիմնականը և որոշիչը: Այս սկզբունքը հանդիսանում է նաև ոչ կանոնադրային հարաբերությունների աճի և սրման կանխարգելման հիմնական նախապայմանը:

Ոչ կանոնադրային հարաբերությունները որպես զինվորական հանցագործությունների դրդիչ գործոն և ծնող պայման:

Ի.Մ.Մացկենիչը բանակային միջավայրում դրսևորվող ներանձնային հարաբերություններով պայմանավորված իրավախախտումները մեկնաբանում է որպես հանցավոր բնույթի կայուն սոցիալ-բացասական երևույթներ, որոնք հիմնված են բանակային միջավայրի բացասական

---

[1] ***Мулява О. Д., Вапилин Е. Г.*** *"Рукоприкладство в армии". Социологические исследования, 2005, № 11, С. 53-62:*

ավանդույթների վր և որոնք էլ իրենց հերթին կրում են պատմական ժամանակամիջոցի ազդեցությունը[1]:

Զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց ոչ ֆորմալ հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում ռազմական կանոնակարգերով, սովորաբար դասակարգվում են որպես «ոչ կանոնադրային»: Ըստ էության, ցանկացած փոխգործակցություն զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց միջև, որոնք նախասահմանված չեն համապատասխան կանոնակարգերով, համարվում են ոչ կանոնադրային:

Անկախ այն հանգամանքից, թե այս բացասական երևույթը տարբեր հեղինակների կողմից ինչ մեկնաբանություն է ստանում, ինչպես նաև անկախ դրանց դրսևորման պատճառներից, կառուցվածքից և լատենտայնությունից, դրանք գործնականում անփոփոխ են:

ՀՀ քրեական օրենսգրքում ոչ կանոնադրային հարաբերությունները սահմանվում են որպես զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ:

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սեռային և տեսակային օբյեկտները համընկնում են. դրանք այն հասարակական հարաբերություններն են, որոնք առաջանում են զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության հատուկ տեսակի, իրականացման ընթացքում:

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները քրեական օրենսգրքով նախատեսված այն հանցագործություններն են, որոնք ուղղված են զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ և կատարվում են զինծառայողների, ինչպես նաև պահեստազորում ընդգրկված այն քաղաքացիների կողմից, ովքեր անցնում են վարժական հավաքներ:

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտիվ կողմը դրսևորվում է գործողության կամ անգործության կատարմամբ: Որոշ հանցակազմերի առաջացման համար պարտադիր է վնասակար հետևանքների առաջացումը:

Ինչ վերաբերում է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտներին, ապա քրեական օրենսգրքի 356 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Սույն գլխում նախատեսված զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտներն են Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում զորակոչի հիման վրա կամ պայմանագրով զինվորական ծառայություն անցնող անձինք, ինչպես նաև ռազմական հավաքներ անցնելու ժամանակ՝ զինապարտները»:

---

[1] ***Мацкевич И.М,*** *Неуставные отношения в армии России («дедовщина») // Прокурорская и следственная практика. 1997. № 2. С, 174-175.*

Հանցանք կատարած, ինչպես նաև ոչ կանոնադրային հարաբերությունների մեջ մտած զինծառայողները բնութագրվում են սոցիալ-ժողովրդագրական, սոցիալ-հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններով:

Սոցիալ-ժողովրդագրական հատկանիշներն ընդգրկում են՝ սեռը, տարիքը, կրթությունը, սոցիալական և ընտանեկան դրությունը, զինվորական կոչումը, ծառայական դրությունը, ծառայության տեղն ու ժամանակը, դատվածությունը և այլ ցուցանիշներ: Ակնհայտ է, որ բանակում ծառայում են հիմնականում երիտասարդ՝ 18 և ավելի բարձր տարիքի տղամարդիկ, հետևապես զինվորական հանցագործությունների սուբյեկտներն էլ այդ տարիքի տղամարդիկ են:

Տարիքային առանձնահատկության հետ է կապված նրանց կենսափորձի պակասը, բարդ իրադրություններում կողմնորոշվելու անընդունակությունը: Որպես կանոն, բանակում ցածր է շարքային անձնակազմի կրթական մակարդակը, հատկապես հանցանք կատարածներինը: Իսկ դա հատկապես կապված է զորակոչային հասակի հետ, այսինքն անձը չի հասցրել ստանալ լիարժեք կրթություն:

Սոցիալ-հոգեբանական առումով, աչքի է ընկնում հանցանք կատարած, ինչպես նաև ոչ կանոնադրային հարաբերությունների մեջ մտած զինվորականների բացասական վերաբերմունքը՝ իր և այլ անձանց սոցիալական արժեքների, հասարակական և զինվորական պարտքի, աշխատանքի, իրավակարգի և զինվորական ծառայության կարգի նկատմամբ: Նրանց հիմնական սոցիալական դիրքորոշումները, պահանջմունքները, շահերը, հայացքները, համոզմունքներն ու սովորույթները որոշակիորեն տարբերվում են օրինապահ զինծառայողների նույնանման որակներից:

Հանցանք կատարած, ինչպես նաև ոչ կանոնադրային հարաբերությունների մեջ մտած զինծառայողներից շատերի մեջ /գիտակցական ցածր մակարդակի, անկայուն բնավորության, անհավասարակշռության, բարդ իրադրությունում իր վարքագիծը ղեկավարելու անկարողության հետևանքով/ դրսևորվել են բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են թեթևամտությունը, ագրեսիվությունը, կոպտությունը, վրեժխնդրությունը, համառությունը և եսասիրությունը: Բացի այդ այսօրվա բանակ զորակոչվող երիտասարդների ճնշող մեծամասնությունը հոգեբանորեն պատրաստ չէ ծառայությանը, ֆիզիկապես թույլ է և որ ամենացավալին է, չունի բավարար գրագիտություն:

Հոգեֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկություններն այնպիսի ներքին պայմաններ են, որոնք նպաստում են վարքագծի դրսևորումների վրա: Դրանք կարող են դանդաղեցնել կամ արագացնել սոցիալական պատճառների դառնալիության գործընթացը, խթանել կամ արգելակել անձի բարոյական ձևավորումը: Այն անձինք, ովքեր

տառապում են նյարդային որոշ հիվանդություններով, որպես կանոն, չեն ազատվում զինվորական ծառայությունից և ընկնելով այդ ծառայության բարդ պայմանների մեջ՝ չեն կարողանում ընտելանալ դրան և հաճախ դիմում են դասալքության:

Հայկական բանակում ոչ կանոնադրային հարաբերությունների և դրանց հետևանքների վերլուծությունը:

Զինված ուժերում մարդու իրավունքների խնդիրը միշտ մտահոգության առարկա են իրավապաշտպանների համար: Տեղական և միջազգային կազմակերպությունների, ԱՄՆ պետդեպարտամենտի հաշվետվությունները փաստում են, որ այս առումով հայկական զինված ուժերում ևս իրավիճակը հեռու է օրինակելի լինելուց: ՀՀ ԶՈՒ-ում գրանցվող ֆիզիկական բռնությունների, ինքնասպանությունների վերաբերյալ հաղորդումները նոր չեն և հաճախ սերում են դեռևս խորհրդային բանակից եկող ավանդույթներից և հիմնականում ոչ կանոնադրային հարաբերությունների հետևանք են: Վերոնշյալ հաշվետվությունները հուշում են, որ խախտումներ տեղի են ունենում ամբողջ բանակում: Չնայած այն հանգամանքին, որ 2018թ. ընթացքում զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում արձանագրված հանցագործությունները 2017թ. համեմատությամբ նվազել են 67 դեպքով, ընդ որում՝ զինվորական կարգի դեմ ուղղված հանցանքները նվազել են 41 դեպքով, իսկ ըստ ծանրության աստիճանի դիտարկելիս, ունենք առանձնապես ծանր հանցագործությունների նվազում 37 դեպքով, միևնույն է ահաբեկում, բռնություն, կոռուպցիա, անպատժելիություն. այս և նմանատիպ երևույթների հայ զինվորները կարող են բախվել զինվորական ծառայության երկու տարիների ընթացքում էլ:

Առկա են վիճակագրական որոշակի տվյալներ: Տվյալների բազայի համաձայն՝ 2010-2016թթ. հայկական կողմը (ԱՀ ՊԲ-ն ներառյալ) 472 զոհ է ունեցել, այդ թվում 133՝ հրադադարի խախտման, 80՝ հայ-ադրբեջանական շփման գծում 1994թ.-ից ի վեր գրանցված ամենաարյունալի բախման՝ 2016թ. ապրիլյան պատերազմի արդյունքում:

Գրանցված մահվան դեպքերի այլ պատճառներ հանդիսացել են դժբախտ պատահարները, ինքնասպանությունները, սպանությունները, առողջական խնդիրները, անվտանգության կանոնների խախտումներն ու անփութությունը:

- Դժբախտ պատահար՝ 81 դեպք,
- Ինքնասպանություն՝ 59 դեպք,
- Սպանություն՝ 50 դեպք,
- Առողջական խնդիրներ՝ 36 դեպք,
- Այլ պատճառներ՝ 14 դեպք,
- Անվտանգության կանոնների խախտում՝ 13 դեպք,
- Անփութություն՝ 6 դեպք:

Ըստ վիճակագրական տվյալների 2017-2018 թվականներին մահվան ելքով դեպքերը նվազել են: 2017թ.-ի ընթացքում ծառայության հետ կապված մահվան ելքով գրանցվել է 56 դեպք, իսկ 2018թ.-ի ընթացքում արձանագրվել է նման 38 դեպք, որից

- սպանություն հակառակորդի կողմից՝ 7 դեպք,
- ականի պայթունից՝ 1 դեպք,
- զենքի օգտագործման կանոնների խախտում՝ 2 դեպք,
- ինքնասպանություն և ինքնասպանության հասցնելու՝ 11 դեպք,
- հիվանդության պատճառով՝ 3 դեպք,
- ավտովթարից՝ 6 դեպք,
- դժբախտ պատահարից՝ 4 դեպք,
- մարտական ծառայության կրման կանոնների խախտման հետևանքով՝ 2 դեպք,
- թռիչքների կանոնների խախտման հետևանքով՝ 2 դեպք:

Վերջին տարիների ընթացքում ինքնասպանությունների և ինքնասպանության հասցնելու թվի աճը (նաև, եթե նկատի ունենանք, որ դրանց մեծամասնությունը հայ-ադրբեջանական սահմանին կամ շփման գծին մոտ տեղակայված զորամասերում է տեղի ունենում) մտահոգվելու առիթ է հայաստանյան քաղհասարակության ներկայացուցիչների համար:

Այսպիսով, ոչ կանոնադրային հարաբերությունները գրեթե բոլոր երկրների զինված ուժերի հիմնական ներքին խնդիրներից մեկն է: Հայոց բանակում, հատկապես վերջին շրջանում, ոչ կանոնադրային հարաբերություններն արմատախիլ անելու խնդրին մեծ ուշադրություն է դարձվում, և այդ նպատակով կիրառվում են մի շարք միջոցներ: Դրանցից են՝ ընդհանուր կարգապահության բարձրացումը, անձնակազմի հետ տարվող դաստիարակչական և հոգեբանական աշխատանքները, հասարակական-պետական պատրաստության դասընթացները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ մարդու իրավունքների հետ ծանոթացման և աշտպանությանն ուղղված միջոցառումները: Սակայն միայն զինված ուժերում տարվող աշխատանքն այս առումով բավական չի կարող լինել: Մինչև պարտադիր զինվորական ծառայության մեկնելը՝ քաղաքացին անցնում է այնպիսի հասարակական ինստիտուտներով, ինչպիսիք են ընտանիքը, դպրոցը, բուհը կայլն՝ յուրաքանչյուրից քաղելով ինչպես դրականը, այնպես էլ բոլոր այն բացասական որակները, որոնք հետո առավել ցայտուն դրսևորվում են զինվորական ծառայության պայմաններում: Այդ պատճառով բանակում տեղի ունեցող անախորժությունների սկզբնաղբյուրը պետք է փնտրել ոչ միայն զինված ուժերում, այլև հասարակության բոլոր օղակներում: Միաժամանակ յուրաքանչյուր զինծառայող, շարքայինից մինչև գեներալ, անելիք ունի այս ուղղությամբ, անելիք, որը պետք է հիմնված լինի բարձր ինքնագիտակցության ու իր ժողովրդի նկատմամբ պատասխանատվության զգացումի վրա:

Վերլուծաբանները, սակայն, գտնում են, որ զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերություններից բխող հանցագործությունները մի քանի անգամ ավելին են, քան վիճակագրության մեջ արտացոլված դեպքերը: Ընդ որում կարծիքներ կան, որ ոչ կանոնադրային հարաբերությունները դրսևորվում են նաև ռազմաճակատում, որոնք, սակայն, բացարձակ ուսումնասիրված չեն ոչ մասնագիտական գրականության մեջ, ոչ էլ հրապարակվում են զանգվածային լրատվության միջոցներով: Հաշվի առնելով ազգային շահը և անվտանգությունը՝ որոշ չափով ընկալելի է սույն մոտեցումը, սակայն, կարծում ենք նաև, որ հասարակությունն իրավունք ունի տեղեկացված լինել զինված ուժերում դրսևորվող ոչ կանոնադրային հարաբերությունների վերաբերյալ, որոնք պետք է հասցվեն նվազագույնի, ինչն էլ ինքնին կհանգեցնի այն բանի, որ անգամ հրապարակային ներկայացվող դեպքերը չեն վնասի ազգային անվտանգությանը:

Ոչ կանոննադրային հարաբերությունների բացառման ուղիները:

Ցանկացած երկրում ազգային անվտանգությունը կապված է նաև զինված ուժերի իմիջի հետ, որը նաև ոչ կանոնադրային հարաբերությունների դրսևորման արդյունք կամ հետևանք է լինում: Հասարակության վստահությունն աճում է դրական արդյունքի դեպքում, ինչը պայմանավորում է բանակի սատարումը ցանկացած իրավիճակում:

Այս իմիջի կամ հեղինակության պահպանությունը ենթադրում է ոչ կանոնադրային հարաբերությունների բացառում: Ոչ կանոնադրային հարաբերությունների բացառման հիմքում զինվորական ծառայության բնույթից բխող սկզբունքներն են: Զինվորական ծառայության բնույթից բխող սկզբունքներից է օրինականությունն ու զինվորական կարգապահության պահպանումը[1]: Երկրի պաշտպանության բնագավառում իրականացվող բարեփոխումների գործընթացը պահանջում է շարունակել տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրության զարգացումն ու կատարելագործումը՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ դարձնել երկրի ռազմական կազմավորման համակարգի պետական մարմինների ու կազմակերպությունների գործունեությունը, ապահովելու ժողովրդավարության և օրինականության գերակայությունը այդ հարաբերություններում: Միաժամանակ պաշտպանական ոլորտի հարաբերություններում ժողովրդավարության սկզբունքների գործնական կիրառումը կապահովի օրինականությունը զինվորական կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց գործողություններում, ինչպես նաև զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության հարցերում:

Ուսումնասիրությունները վկայում են, որ օրինականության սկզբունքը խախտվում է հատկապես այն դեպքերում, երբ զինվորական

[1] ***Мигачев Ю.И., Тихомиров С.В.,*** *Военное право. Учебник, М., 1998, с.59.*

ծառայությունը և այն անցնող անձինք օգտագործվում են ոչ այդ ծառայության նպատակներին ուղղակիորեն առնչվող ոլորտներում: Երկրի անվտանգության ու պաշտպանության շահերով պայմանավորված խնդիրների լուծման համար զորքի և այլ զինվորական կազմավորումների օգտագործումը պետք է լինի իրավաբանորեն (օրենսդրորեն) հիմնավորված և ոչ թե կախյալ պետության քաղաքական ղեկավարության հայեցողությունից ու կամքից[1]:

Զինվորական ծառայության բնույթից բխող սկզբունքներից է նաև զինվորական կարգապահության պահպանումը: Զինվորական կարգապահությունը բոլոր զինծառայողների՝ օրենքներով, զինվորական կանոնադրություններով (կանոնագրքերով) և հրամանատարների (պետերի) հրամաններով սահմանված կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է: Վերջինս նպատակ չունի սահմանափակել մարդու իրավունքները և մերժել նախաձեռնությունը, այլ ապահովում է զինծառայողների համախմբվածությունը, պետության զինված ուժերի առջև ծառացած խնդիրները լուծելու պատրաստակամությունը: Զինվորական կարգապահությունը բարոյական, մտավոր և ֆիզիկական այն բոլոր ունակությունների ամբողջությունն է, որոնք անհրաժեշտ են, որպեսզի զինվորներն ու սպաները համապատասխանեն իրենց գործնական նշանակությանը[2]:

Մասնագիտական գրականության մեջ[3] առանձնացվում են զինվորական կարգապահության հետևյալ հատկանիշները. զինծառայողների՝ ընդհանուր իրավակարգի խստագույնս պահպանման ապահովումը, զինծառայողների միջև օրինական փոխհարաբերու-թյունների հաստատումը, վերադասների օրինական հրամանների և կարգադրությունների անշեղ կատարումն ու ենթարկվելը: Յուրաքանչյուր ծառայողի՝ վերադասին պարտադիր ենթարկվելը յուրաքանչյուր կառույցի արդյունավետ գործառնության էական սկզբունք է:

Ընդհանրացնելով սույն հոդվածում ներկայացվածը, պետք է փաստենք, որ բանակում, որպես հասարակության մի մաս, գործում են

---

[1] ***Зателепин О.К.*** *К вопросу о необходимости сохранения ареста в отношении военнослужащих как уголовного наказания // Право в Вооруженных силах. 2005- №4.*

[2] ***Мигачев Ю.И., Тихомиров С.В.,*** *Военная служба: поступление, призыв, прохождение, увольнение. Справочное пособие, М., 1999, с. 84.*

[3] *Конституцонно-правовой статус Совета Безопасности Российской Федерации, Учебное пособие, Под общей редакцией докт.юрид.наук Н.П.Патрушева, М., 2009; Зателепин О.К., Квалификация преступлений против военной безопасности государтсва, М., 2009; Акчурин З.Х., Белоусов Н.В., Правовая работа в военных организациях, Практическов учебно-методическое пособие, М., 2006; Корякин В.М., Военно-административное право /военная администрация/, Учебник, М., 2008; Корякин В.М., коррупция в вооруженных силах: теория и практика противодействия, М., 2008; Кудашкин А.В., Комментарий законодательство о дисциплинарной отвестнности военноскужащих, М., 2007*

հիմնականում հանցավորության ընդհանուր պատճառներն ու պայմանները, սակայն ստանալով յուրահատուկ ձևափոխումներ, որոնք հատուկ են զինվորական ծառայությանը, միջավայրին, նրանց կենցաղի պայմաններին: Սակայն հարկ է նշել, որ բանակի քրեածին իրավիճակի վրա ներգործում են այնպիսի նեգատիվ գործոններ, որոնք բնորոշ են նաև ամբողջ հասարակությանը, օրինակ՝ դեռևս չլուծված խնդիրները, բարոյականության և կարգապահության մակարդակը, նաև իրավական գիտելիքների պակասը և այլն: Այսօր մեր բանակում ավելի անհանգստացնող են զողության դեպքերը, մարմնական վնասվածքները, ծեծկռտուքները, սպանությունները և ինքնասպանության հասցնելու դեպքերը և այլ պատճառներով ոչ մարտական կորուստները:

Ոչ կանոնադրային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են թողնում բանակի մարտունակության, զինված ուժերի կերպարի վրա: Պատճառների մեջ պետք է նշել հրամանատարական կազմի կրթական, պրոֆեսիոնալիզմի մակարդակը, նրանց նյութական ապահովվածության պայմանները, կարգապահության ոչ անհրաժեշտ մակարդակը: Խնդիրը կայանում է նրանում, որ բանակ է թափանցում նաև կրտսեր հրանատարական կազմը /ենթասպաները/, որոնք բացի այն, որ բարոյապես, հոգեբանական որակներով կայուն չեն, երբեմն ունեն նաև հակահիրավական հայացքներ և մեծամասամբ կատարում են շահադիտական բնույթի հանցագործություններ:

Երբեմն զինվորական հանցագործություններին նպաստում են առանձին հրամանատարների ոչ կանոնադրային մոտեցումները այս կամ այն խախտումներ թույլ տված զինծառայողների նկատմամբ: Ընդ որում առանձին դեպքերում մոտեցումները ոչ թե ընդհանուր են, այլ տարբերակված, սա էլ պատճառ է հանդիսանում զինվորականների դժգոհությունների, հրամանատրներին չենթարկվելուն, հաճախ նաև փախուստի դիմելուն և այս կարգի այլ հանցագործությունների համար: Շատերի մոտ այդպիսի դեպքերում առաջանում է հիասթափություն, հուսալքություն, արժեքաբանական դիսոնանս և հետևանքները լինում են բացասական:

Պատճառների և պայմանների մեջ իրենց ծանրակշիռ դերն ունեն բանակում տարվող դաստիարակչական աշխատանքների մակարդակը, դրանց գաղափարական, բարոյահոգեբանական, գեղարվեստական դաստիարակչական ոչ բավարար ներգործուն ուժը: Վատ է անդրադառնում նաև զինվորական բարձր պաշտոնյաների կողմից բացասական այս կամ այն վարքագծի դրսևորումը, վարքաբանական մշակույթի ցածր մակարդակը, ոչ ճիշտ որոշումների կայացումը:

Ոչ կանոնադրային հարաբերությունների կանխարգելման համար առաջնային նշանակություն ունի համասոցիալական մակարդակով իրականացվող միջոցառումները, որոնք առաջին հերթին ուղղված են չեզոքացնելու այդ հանցագործությունների տնտեսական պատճառները,

լուծելու սոցիալական բնույթի մի շարք հարցեր: Առաջին հերթին անհրաժեշտ է ամրապնդել զինվորական ծառայության հեղինակությունը, ապահովել բանակի **ռեալ** մասնագիտացումը, անձնակազմի համապատասխանությունը ժամանակակից որակապես նոր պահանջմունքներին: Միայն այս դեպքում հնարավոր է հասնել զինծառայողների հանցավորության հատուկ կանխարգելմանը:

Այս ոլորտում կարևորագույն ուղղությունը զինվորական կարգապահությունն է, այդ ուղղությամբ, դաստիարակչական պրոֆիլակտիկ բոլոր հնարավորությունների օգտագործումն է, որոնց հիմքում պետք է ընկած լինեն զինվորական կանոնագրքերը և կանոնադրությունները, որոնք մանրակրկտորեն կարգավորում են զինծառայողների կյանքի բոլոր կողմերը: Շատ կարևոր է այդ աշխատանքների սկսումը դեռևս հանրակրթական դպրոցներից, որտեղ դասավանդվում է նախնական զինվորական ծառայության սկզբունքները, կարևոր է նաև այդ աշխատանքներն ընտանիքում, աշխատանքային կոլեկտիվներում, որտեղ ձևավորվում է ապագա զինվորը: Կարևոր է ռազմահայրենասիրական դաստիարակությունը ինչպես դպրոցներում այնպես էլ զանազան հասարակական շարժումներում, ինչպիսին սկաութական շարժումն է:

Օրինաչափ վարքագծի ձևավորման համար կարևոր նշանակություն ունի հրամանատարների և պետերի անձնական օրինակը, առաջին հերթին նրանք պետք է լինեն բարոյահոգեբանական բարձր որակների տեր և պրոֆեսիոնալ ոչ միայն մասնագիտական առումով, այլև պրոֆեսիոնալ անձնակազմի հետ աշխատելու առումով:

Կարևոր աշխատանք պետք է տարվի զինվորական կադրերի պատրաստման գործում, որպեսզի նրանք լինեն կամ դառնան իրենց գործի պրոֆեսիոնալը, սիրեն իրենց գործը և նվիրվեն այդ աշխատանքին: Անհրաժեշտ է, որ նրանք ունենան մանկավարժական և հոգեբանական գիտելիքներ: Բանակում բարոյահոգեբանական դաստիարակության գործում զգալի դեր է խաղում կրոնական դաստիարակությունը: Մի շարք զորամասերում կառուցվել են մատուռներ:

Կարևոր դերակատարում ունի դատախազական հսկողությունը, որը առանձին ստուգումներով, խախտումների փաստերով վեր է հանում բանակում, զորամասում այս կամ այն իրավախախտման պատճառներն ու պայմանները, միջոցներ է ձեռնարկում դրանք վերացնելու ուղղությամբ:

Կանխարգելման գործում զգալի անելիքներ ունի Ռազմական ոստիկանությունը, նրա տարածքային ստորաբաժանումները, որոնք անհրաժեշտության դեպքում համագործակցում են տարածքային ոստիկանության ստորաբաժանումների հետ, դասալիքներին, հանցագործություն կատարած, փախուստի դիմած հանցագործ, ինչպես նաև ոչ կանոնադրային հարաբերությունների մեջ մտած զինծառայողներին հայտնաբերելու և վնասազերծելու գործում:

Հասարակական կազմակերպություններից նշանակալից դեր են խաղում «զինվորականների մայրերի» կոմիտեները: Դրական նշանակություն ունեն այնպիսի միջոցառումները, ինչպիսիք են «բաց դռների օրը» զորամասերում կամ այնպիսի միջոցառում ինչպիսին է ծնողների ուղևորության անվճար կազմակերպումը հատկապես հեռավոր զորամասեր:

Որոշակի կանխարգելիչ նշանակություն ունեն ԶԼՄ-երը, մասնագիտական այնպիսի հաղորդումները, ինչպիսիք են Զինուժը, «Հայ զինվոր» հանդեսը և «Մարտիկ» թերթը, որոնք ոչ միայն պրոպագանդում են զինվորական ծառայության դերն ու նշանակությանը հայրենիքի պաշտպանության գործում, այլև բարձրացնում են երիտասարդների, հատկապես զորակոչիկների պարտքի զգացումը:

Բանակում ոչ կանոնադրային հարաբերությունների աճը պայմանավորված է նաև 18-ամյա երիտասարդների՝ նոր, առավել սահմանափակ հնարավորություններ ունեցող պայմաններով կենսակերպի անցնելու հանգամանքով: Նորակոչիկների մի մասը հոգեբանորեն պատրաստ չէ այդօրինակ փոփոխությանը, իսկ մյուս մասը բանակ է գնում արատավորված արժեքային համակարգով, ինչը հետևանք է հասարակության լայն շերտերում տարածված բռնության, ստորացման և դիմացինին ճնշելու միջոցով ինքնահաստատման հասնելու նկրտումով: Բնականաբար, այսօրինակ պատկերացումներով «խմբի», մեր դեպքում զորքի ներսում հարմարվելը և երկամյա կանոնադրային կյանք վարելն առաջացնում է լրջագույն դժվարություններ: Ձևախեղվող զինվոր-զինվոր, զինվոր-հրամանատար հարաբերությունները հնարավորինս առողջացնել կարող ենք ոչ կանոնադրային հարաբերությունների կանխման միջոցով՝ շեշտը դնելով նորակոչիկների մինչբանակային կյանքում՝ դպրոցում և բուհերում բանակ զորակոչվող նորակոչիկների արժեքային մեկ այլ համակարգ ձևավորելու վրա: Նորակոչիկների հոգեբանական պատրաստվածությունը սպաներին կազատի լրացուցիչ խնդիրներից և թույլ կտա զբաղվել իրենց հիմնական գործով՝ ուսուցանել մարտական և շարային պատրաստականություն:

Կարծում ենք նաև, որ ավարտական դասարաններում պետք է ավելացվեն ռազմական գիտությունների դասավանդումը: Նորակոչիկները մինչ բանակային կյանք մտնելը պետք է հնարավորինս ծանոթ լինեն կանոնադրային հարաբերություններին: Բացի այդ պարբերաբար պետք է անցկացվեն նաև գիտելիքների տեսական և գործնական ստուգումներ:

Մինչբանակային շրջանում և բանակային կյանքում պետք է պարբերաբար ստուգվի նորակոչիկի և զինվորի հոգեկան կայունությունը: Նմանօրինակ ստուգումներ պետք է անցկացվեն նաև սպաների շրջանում: Հոգեկան կայունության բարձր և կոնֆլիկտայնության ցածր մակարդակի, կանոնադրային հարաբերությունների վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների առկայության դեպքում միայն զինվոր-զինվոր,

զինվոր-հրամանատար հարաբերությունները չեն վնասի ռազմական անվտանգությանը:

Բացի նորակոչիկների հետ կապված աշխատանքներից յուրաքանչյուր զորակոչից առաջ զորամասերում պետք է համապատասխան գործնական և հոգեբանական աշխատանքներ տարվեն նաև «հին» ծառայողների հետ, քանի որ նորակոչիկների հարմարվողականությունը և անխոչընդոտ ծառայության սկիզբը պայմանավորված է «հին» ծառայողների կողմից նորակոչիկներին ընդունելու մշակույթով, որն իր մեջ կրում է ինչպես կանոնադրային, այնպես բարոյահոգեբանական նորմեր:

Կարծում ենք նաև խիստ անհրաժեշտություն է պարբերաբար կազմակերպել նորակոչիկներին և զինվորներին ՀՀ օրենսդրությամբ և միջազգային ակտերով սահմանված մարդու իրավունքներին ծանոթացնելուն ուղղված դասընթացներ, որոնք լրացուցիչ խթան կհանդիսանան ոչ կանոնադրային հարաբերությունները բացառելու համար՝ ի հաշիվ թիրախ-խմբերի իրավագիտակցության մակարդակի բարձրացման:

Չկենտրոնանալով միայն նորակոչիկների և զինվորների արժեհամակարգի, իրավունքների և պարտականությունների վրա՝ ընդգծենք, որ բանակային երկամյա կյանքի ընթացքում զինվորի կյանքի և առողջության համար պատասխանատու է նախ և առաջ զինվորի անմիջական հրամանատարը, ում պատասխանատվությունն այս առումով ամրագրված է զինված ուժերի կանոնադրություններում՝ ի պաշտոնե նրա վրա դրված պարտականությունների ձևով: Զինվորի անմիջական հրամանատարը պատասխանատվության ամենաբարձր մակարդակով պետք է կատարի կանոնադրությամբ սահմանված պարտականությունները, քանի որ պրակտիկան ցույց է տվել, որ զինվորների կյանքը և առողջությունը վտանգող դեպքերը հիմնականում առաջացել են զինվորի անմիջական հրամանատրի կողմից ի պաշտոնե սահմանված պարտականությունների չկատարման կամ թերակատարման հետևանքով:

Զինվորական հանցավորության կանխարգելումն ունի իր յուրահատկությունները, քանի որ՝

1. հանցագործ, ինչպես նաև ոչ կանոնադրային հարաբերությունների մեջ մտած զինծառայողի անձը զգալիորեն տարբերվում է սովորական հանցագործ անձից,
2. զինծառայողի հանցավոր վարքագծի մեխանիզմը կապված նրանց ֆունկցիոնալ խնդիրների հետ, նաև զինված լինելու հանգամանքը,
3. զինծառայողների սպառողական մոտիվացիան, որն ուղղված է հիմնականում պարզագույն ցանկությունների իրագործմանը,
4. զինծառայողները երկար ժամանակ գտնվում են միասեռ սոցիալական խմբում:

Այսպիսով, վերը ներկայացված հանգամանքները հիմք ընդունելով հարկ է արձանագրել զինծառայողների շրջանում անհրաժեշտ պրոֆիլակտիկ հետևյալ միջոցառումները՝

1. այլընտրանքային քաղաքացիական ծառայության կազմակերպումը,
2. զինակոչի տարիքային ցենզի բարձրացումը /20-21/,
3. զինծառայության ժամկետի աստիճանական կրճատումը, ինչը մեր հանրապետությունում այսօր անիրագործելի է,
4. սոցիալական-կենցաղային պայմանների բարելավումը, որպեսզի զինծառայողները իրենց պահանջները բավարարեն օրինական միջոցներով,
5. դաստիարակ - սպաների ինստիտուտի ստեղծումը, որպեսզի զինակոչիկը դժվար պահին կարողանա դիմել նրանց օգնությանը,
6. մշակութային միջոցառումների ավելացումը, որոնց հնարավոր կլինի հրավիրել զինծառայողների հարազատներին,
7. այս ոլորտում տիրող կոռուպցիայի դեմ պայքարը,
8. ռազմական ոստիկանության աշխատանքների բարելավումը,
9. զինծառայողների կողմից կատարված իրավախախտումների համար պատասխանատվության համարժեքությունը՝ լինի այն կարգապահական, թե քրեական,
10. կարգապահական գումարտակներում և վաշտերում տարվող աշխատանքների բարելավումը:

Գրականություն

1. Ազգային անվտանգության հիմնախնդիրներ: Դասախոսություններ / Վ.Կ. Աթոյան.- Եր.: «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014, 154 էջ:
2. Գնդապետ Մնացական Ռ. Խաչատրեան: Հայաստանի ռազմական պատմութիւն: Երևան, 2013թ. (Անտիպ):
3. Ռազմական սոցիոլոգիա. Ուսումնական նյութերի ժողովածու (Լ. Հարությունյանի խմբագրությամբ): Ե., Երևանի պետական համալսարանի հրատ., 2005, 219 էջ:
4. Административное право России. Учебник для юридических вузов и факультетов. Отв. ред. А.П. Аленьин, изд. Зерцало, Москва, 2006, с.84.
5. Анисимков В.М. Россия в зеркале уголовных традиций тюрьмы. СПб., 2003. С. 13.
6. Говоров И.В. Уголовно-правовые принципы государственной политики в области борьбы с преступностью в Советской России (1920—1940-е гг.) // История государства и права. 2004. № I. С. 31-39.
7. Давид Р., Жоффре-Спинози К. Основные правовые системы современности.М,1997,с.227

8. Зателепин О.К. К вопросу о необходимости сохранения ареста в отношении военнослужащих как уголовного наказания // Право в Вооруженных силах. 2005- №4.
9. Кашуба Ю.А., Скиба АЛ. Воинская «неуставная» преступность: истоки, состояние, прогноз // Российский криминологический взгляд. 2006. № 3, с. 91.
10. Кислицын М.К., Самойлов А.С. Перспективы совершенствования законодательства об уголовной ответственности военнослужащих // Право в Вооруженных Силах. 2002. № 1.
11. Клебанов Л.Р. Десять лет Уголовному кодексу Российской Федерации; достоинства и недостатки (Научно-практическая конференция) // Государство и право. 2006. №10., 100.
12. Клейменов МП., Сапин В А, Характеристика лидера криминальной среды // Преступность в разных ее проявлениях и организованная преступность / Под ред. А.И. Долговой. М, 2004.
13. Кобылко Э. Законность и правопорядок: основные направления и способы их обеспечения в Вооруженных Силах Российской Федерации. Уголовная ответственность за воинские преступления против военной службы // Методист* 2004. № 12.
14. Кокоров А. А. Силовая дипломатия Вашингтона, М., 1985г., с. 16.
15. Коротеева П. А. Теория международных национализма в зарубежных социальных науках, М.РГТУ, 1991,с 131
16. Кочетков А. Криминальные проявления в культуре современной России // Законность. 2001. № 5, С. 26.
17. Кулагин В.М., Современная международная безопасность: учебное пособие/ В.М. Кулагин. –М.: КНОРУС, 2012. С. 18.
18. Лякишсв В. Правовые основы укрепления воинской дисциплины и правопорядка// Ориентир. 2002. № 9. С, 52.
19. Мацкевич И.М, Неуставные отношения в армии России («дедовщина») // Прокурорская и следственная практика. 1997. № 2. С, 174-175.
20. Мулява О. Д., Вапилин Е. Г. “Рукоприкладство в армии”. Социологические исследования, 2005, № 11, С. 53-62:

21. Ногаев И. В. Категории “Национальный интерес” и “Национальная безопасность”, США-Канада, N 8,2007, с 72
22. Образцов И. В. Формы проявления неуставных отношений. Социологические исследования, 1996, № 2, С. 63-72.
23. Шлезингер А. Циклы американской истории. М., 1992. С. 173.
24. Федоров С. Направление в дисциплинарную воинскую часть и лишение свободы // Законность. 2005. № 2. С. 9-12.
25. Цыганков П. А. Теория международных отношений,М., 2003, с. 294,297
26. Green j. Encyclopedia of American Political history, vol. III, N. Y. ., 1984, p. 856.
27. Mark Axworthy, Third Axis, Fourth Ally: The Romanian Army in World War II (London: Arms and Armour, 1996), pp. 185-218.
28. The Public Image of Security, Defence and the Military in Europe: Edited by Marie Vlachová Center for the Democratic Control of Armed Forces (DCAF) in Geneva Center for Civil-Military Relations (CCMR) in Belgrade, Belgrade, 2003, p. 57.
29. Security Inclusion of the FRY in Partnership for Peace and EuroAtlantic Community – an international conference organized with the Geneva Centre for the Democratic Control of Armed Forces and NATO Office for Information and Press, in September 2001.
30. The Effects of the Changes of the Law on the Army of Yugoslavia (December 2002, co-organizer with the Center for Anti-War Action)
31. www.presydensy.ucsb.edu/site/docs/sou.php.
32. http://www.mil.am

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,